ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 02, 03.04.2018թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	բաժնետոմս,	պարտատոմս	պարտատոմս
արժեթղթերի քանակը՝	1,760,731 հատ,	140,000 հատ	920.000 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	5,000 ՀՀ դրամ,	10,000 ՀՀ դրամ	25 ԱՄՆ դոլար

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ Բաց Բաժնետիրական ընկերության 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 51 ամիս շրջանառության ժամկետով, արժեկտրոնային, տարեկան 5.25% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 320,000 հատ անվանական պարտատոմսերը (ARBKB2H) ցուցակելու, Բորսայի պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում ընդգրկելու, ցուցակման պահից նշված պարտատոմսերով հասցեական առևտուրն ու ռեպո գործարքների կնքումը թույլատրելու մասին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի Գլխավոր տնօրենի 2018 թվականի մարտի 28-ի թիվ ՑՊ-008-03/18 որոշում («ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի Գլխավոր տնօրենի որոշումը կցվում է):

NASDAQ OMX

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

28 մարտի 2018 թվականի N ՑՊ-008-03/18

ք. Երևան

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ (Abond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) 2018 թվականի մարտի 12-ի հայտը 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 51 ամիս շրջանառության ժամկետով, արժեկտրոնային, տարեկան 5.25% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 320,000 (երեք հարյուր քսան հազար) հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերություն (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի կողմից 2018 թվականի մարտի 27-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 11-րդ գլխի 53 կետով, 16-րդ գլխով և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 51 ամիս շրջանառության ժամկետով, արժեկտրոնային, տարեկան 5.25% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 320,000 (երեք հարյուր քսան հազար) հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից շնորհվել է AMARBKB2HER3 ծածկագիրը, ցուցակել և ընդգրկել պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում, շնորհել ARBKB2H հապավումը, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական առևտուրը և ռեպո գործարքների կնքումը:
2. Հանձնարարել «Բորսայական ծառայությունների դեպարտամենտ»-ին՝ սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում, որոշման մեկ օրինակն ուղարկել Ընկերությանը և որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի ապրիլի 3-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**

«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ • ՀՀ, Երևան 0010, Մհեր Մկրտչյան 5բ • www.nasdaqomx.am
հեռ.՝ +374 10 543 321 • ֆաքս՝ +374 10 543 321 լր 135 • էլ. փոստ՝ info@nasdaqomx.am